

Կարրիերի առարկութիւնները Խորենացու նկատմամբ ոյժ ունեն, այսահետ այդ ոյժը կորցնում էն:

Սակայն իմ գրութիւնը շատ աւելի երկար եղաւ քան ես անելու մտագիր էի, և աւելի բաներ ստիպուած եղայ ասելու քան գուցե իմ թերի ծանօթութիւնների վերայ հիմնուած իրաւունք ունեի: Ցոյս ունիմ ընթերցողը՝ ամենից առաջ իմ մեծարգոյ ուսուցիչ Պ. Կարրիեր սխալ չի բացատրի վարմունքը և ներողամիա կզտնուի: \*

ԿԱՐՈՊԱՏՍ Ս. Տ. ՄԿՐՏՉԵԱՆ.

6/48 Ապրիլ 1894.  
ՄԱՐԲՈՒՐԻՑ.

\* Յ. Գ. Ի գետ աչքի առաջ ունենալով՝ որ հայր Գիւտ ք. Աղասեան իւր ձեռնարկած մեծայարդ աշխատութեան՝ Սիմեօն կամտուղիկոսի պատմութեան համար անշուշտ ամեն կողմից աղբիւրներ է օրոնում՝ թոյլ եմ տալիս ինձ Արժ. Հօր ուշադրութիւնը հրաւիրել հերլինի արքունական մատենադարանում գտնուած քարոզների մի ժաղավածուի վերայ: Որի հեղինակն է Սիմեօն վարդապէտ Եր և անեցի: Այսական հայերէն ձեռագիրների ցուցակը կազմող Պ. Քարամեան չնկատելով՝ «քարդապետ» բառին կից «Երեւ» մասնիկը՝ կարդացել է միայն յաջորդ տողի վերայ անցրած «անեցի»-ն և այդպէս էլ գրի հեղինակ նշանակել ցուցակի մէջ՝ Սիմեօն վ. Անեցի»-ն: Պ. Քարամեան նոյն գրուածքի ընթացքում երկրորդ անգամ հանդիպելով՝ «Սիմեօն վ. Երեւանցի» անուան, փոխանակ դառնալու առաջինի հետ համեմատելու, մանաւանդ որ 18-րդ դարի մի հեղինակ «Անեցի» լինել չէր կարող՝ այս «երկրորդ» ընթերցուածքը սխալ է համարել: Ինչ և իցէ այս ձեռագիրը ինչպէս ինձ երևաց արտագրութիւն չէ: այլ նոյն իսկ հեղինակի դրածը, այնպէս որ գուցէ նա միակ օրինակ լինի: իսկ իւր պարունակած մանաւանդ 2 քարոզները՝ միւռոն օրհնութեան և ս. Էջմաննի տօնի առմիւր, բացի հսկատորական արժանիքից իրենց մէջ արծարծուած դադափարների համար պատմական նշանակութիւն ունին և անշուշտ Սիմեօն կաթ.-ի գործը պիտի լինին: Դժբաղգարար ես այն ժամանակ խիստ զրադուած լինելով՝ այդ քարոզները օրինակել չկարողացայ: Բայց այդ գժուար չէ ի հարկէ անել տալ:

Այլ և մեր ձեմարանական եղայր Քուշմանեանի համար: որ «Նրձագանքի» միջոցով յայտնել էր, թէ ուսէարէնի քերականութիւն է պատրաստում՝ կարող եմ հետեւալը նկատել. Փարիզի Ազգ. մատենադարանի Տարր. Արտ. 66 ձեռագիրը ներկայացնումէ մի «համառօտութիւն հայկական քերականութեան Ուտեաց լեզուի՝ արարեալ ի Կարապետ

գորէ Նահրամանեան Եւթանգիլեանց Գաշբութացուց. 1848 ամիւ որից այնտեղի օրինակը «ետօրինակել ի Թիֆլիզ քաղաքի ի վանք անուանեալ եկեղեցւով վիճակաւոր առաջնորդն Պրուսայու Գէորգ սրբ և ուսումնասէր արքեպիսկոպոս Պ. Պոլսեցի» 1842 թ. «Գուցէ ուրեմն Քուշմանեանը այս տեղեկութիւնից օգտուելով կյաջողեցնէ գտնել բնագիրը և այդպիսով իւր գործը աւելի կթեթևացնէ: ԱՌՅԱՆ.

## ՀԱՅԿԱԿԱՆ Ք\*



Յ

ախընթաց յօդուածներից մէկում (§ 8) արդէն գէպք ունեցայ Խորենացու ինձ ի մօտոյ յայտնի ձեռագիրերի դասաւորութեան մի թեթև փորձ անելու: Այնտեղում արդէն նկատեցի, որ Ա գասը երեք որոշ ստորաբաժանում ունի, մինչդեռ Բ գասը—և ոչ մի: Երկար և մանրագննին դիտողութիւնները ինձ համոզեցին, որ Ա գասի ստորաբաժանութները՝ խոռն ի խուռն, անկանոն և անկերպարան շեղութներ չեն, այլ առանձին առանձին խմբեր են, միմեանցից շատ անջատ՝ և որոշ կերպով սահմանաւորուած: Այս իսկ հիման վրայ այդ ստորաբաժանութները՝ աւելի պարզութեան համար՝ այսուհետեւ անուանելու եմ Ա, Բ, Գ ի խումբ, իսկ Բ գասը—Դ ի խումբ:

Այսպիսով իմ ձեռքում եղած 17 ձեռագիրերը + Անահնի օրինակը (ձեռքի տակ ունիմ Ապոի հրատապատութիւնը և ոչ թէ բուն ձեռագիրը) + Կարենեանցի 2 օրինակների բաղդատութիւնը = ընդ ամենը 20 օրինակ՝ կազմում են իմ դասաւորութեան, այն է Ա, Բ, Գ, Դ չորս խմբերի հիմունքը: Խո-

\* Տես նախընթաց համարը:

րենացու՝ թէկ յաճախ ընդհատուող բայց երկարատևե՝ ուսումնասիրութիւնից չեռք բերած հետևանքներից ամենազլիսաւորն և ամենակարևորը համարում եմ ձեռապրերի այս դասաւորութիւնը։ Մինչեւ այժմ իմ և ուրիշների արած մասնական փորձերը վերականգնելու համար Խոր. բնազրի այս կամ այն հատուածը կամ բառը նմանում են մութ սենեակում խորիսարելուն, որովհետեւ չունենք կշիռ զնահատութեան մի որ և է հաստատուն շափ, այս կամ այն ընթերցուածի արժանաւորութիւնը կշռելու այս կամ այն վարիանոր ընտրելու կամ խոտելու համար։ Այժմ ինդիրը բոլորովին փոխուած է։ Ի յն կէտերը, որոնք այս կամ այն պատճառով պրաւել են ուշադրութիւնս և ուսումնասիրութեան նիւթ գարձել՝ այժմ նորից աչքից անցնելով այս չորս խմբերի առւած ընթերցուածների բազդատութեամբ համոզուում եմ որ խսկապես մթնում էինք խարիստել, թէկ զիտողութիւններից շատերը արդարանում են։

Առաջիկայ տարին—1895-ին—լրանում է Խոր. Պատմութեան առաջին հրատարակութեան 200-ամեակը։ Այս երկու դարի ընթացքում բնազրը անընդհատ ուսումնասիրութեանց նիւթ է եղել մի բան որին չեարժանացել և ոչ մի հայ գրուածք, ոչ նոյն իսկ Ա. Գրիբ թարգմանութիւնը։ Ասկայն շատ և շատ հեռու ենք քիչ թէ շատ ձշտուած քննադասական բնազրի ունենալուց։ Եւ այդ լոկ այն պատճառով, որ չենք ունեցել հաստատուն հիմք, որի վրայ շինուած լինեն մեր ուսումնասիրութիւնները։ Այդ հաստատուն և անհրաժեշտ հիմքը զարդարուած բնազրի ստունալու բազմաթիւ ձեռապրերի դասաւորութիւնն է և խմբերի ծիշ որոշումը, եթէ մի այն այս ինձ յաջողուել է։

Պէտք է ցաւելով նկատել որ մեր հին մատենապրութեան և ոչ մի արդիւնքը մինչև օրս չունի այդպիսի քննադասական բնազրի, յայտնի ձեռապրերի դասաւորութեան վրայ հիմուած, ուսաի և չունինք և ոչ մի երես

հին մատենապրութիւնից, որի ձշտութեանը կարելի լինէր երաշխաւորել։ Այս իսկ պատճառով և ամեն մի տեսակ հետազօտութիւն, թէ պատճական և թէ զիտութեան այլ ձիւղերի վերաբերեալ հիմուած մեր ոյժեան պատճենի վրայ, շատ խախուտ է և պիտի կորցնէ շատ անգամ իւր հիմքը։ Իսկ թէ ինչ պատճառով մինչեւ օրս լուրջ կերպով չէ ձեռնարկուել քննադասական բնազրերի պատճաստութեանը՝ այդ ինքն ըստ ինքեան հականալի է։ Մեր բանասէրներից և ուսուցիչներից ամենամեծ մասը գեռ մինչեւ օրս և լաւ չեն ըմբռնել այդ բանի անհրաժեշտութիւնը և առաջնակարգ կարեւորութիւնը և իրենց հետազօտութիւններն ու ուսումնասիրութիւնները հիմուած են այս կամ այն անիմամ հրատարակութեան վրայ, առանց նեզութիւն քաշելու երկար բարակ ձեռապրերի մէջ թարթափելու։ Միւս կողմից՝ ձեռապրերը կամ ցրուած են եղել (և են), և կամ այնպիսի կեզրոններում են զանուում որոնք զիւրամատչելի չեն զիտանական բանասէրներին։

Այժմ մեր այս դասաւորութեան խմբերի հիմք են կազմել ինչպիս սասացինք, 20 ձեռապրի, որոնցից երկուոր ինձ ծանօթ են այն չափով ինչ չափով որ նրանց ընթերցուածները հրատարակուած են կարենեանցի բաղդատութեան մէջ։ Բացի այս 20-ից աչքի առաջ եմ ունեցել Վենետիկի 1843—65-ի հրատարակութեան 6 ձեռապրերի ընթերցուածները՝ հրատարակուածի չափով ուստի և առանց զիտանալու թէ ինչ ընթերցուած՝ ինչ ձեռապրից է։ Որանց վրայ պէտք է աւելացնել Վանանդեցու հրատարակութիւնը, Էջյացիցի զբագլանի 1696-ին զբուած օրինակը, որ Բառումբարսների ասելով Վանանդեցու օրինակի տեսակիցն է, և վերջապէս պ. Մառի նկարազմած մի ուրիշ ձեռապրի, որ յար և նման է Ասնահնի օրինակին (Հայկակ. Զեռապ. մեմ. Արևել. լեզ. Պրդ, № 1, տես Հանդէս Ամսօր. 1892, եր. 45)։ Ընդ ամենը ուրեմն 29 ձեռապրի, որոնց ընթերցուածները մասսամբ ծանօթ են հրատարակութեամբ,

և աւելի մեծ մասամբ ծանօթ են միայն ինձ համախմբած ձեռագրերից։ Աւ, աշակ դրանց վրայ եմ հիմնել իմ խմբերի դասաւորութիւնը։

Կան էլի տասից աւելի ձեռագրից, որոնց մասին հեռալից միայն լսել եմ, կամ զանազան հրատարակութեանց մէջ հանդիպել նորանց միշտատակութեանը։ Այդ ձեռագրերի ինչ խմբի պատկանելը որոշել ինձ՝ այժմեան հանգամանքներում՝ անհնար է։ Կարելի լինի թիրևս ենթադրութիւններ անել, հիմնուելով միմիայն որի կազմութեան վրայ։ Այսպէս, օրինակ, յայտնի է պ. Եղեանցի մօտ գտնուած Խորենացու տիի կազմութիւնը (տե՛ս Յառաջ. Ասողիկի, հրատ. պ. Մալխասեանցի)։

Վերջապէս շմոռանանք միշել և այն, որ ինձից առաջ Խորենացու ձեռագրերի և մասնաւորապէս զանազան հրատարակութեանց դորձով զբաղուող միակ հեղինակն է Ադոլֆ Բաումգարտեր (Ueber Das Buch „Die Chrie“, Leipzig, 1886, եր. 482—489, արտասպ. Zeitschrift der Deutschen Morgen. Gesel. Bd. XL.) որը ի մի ամփոփելով Խորենացու Պատմ. քննադատական բնագրի պատրաստութեան համար եղած բոլոր աշխատանքները (մինչև 1886 թիւը), թէ Վենետիկում և թէ ուրիշ տեղեր կատարուած (—անհրաժեշտ տեղեկութիւններ քննադատ. բնագրի պատմութեան համար), դալիս է այն հետեանքին, որ հակադրումէ Վենետիկի լաւագրյն (1843) և Ամստերդամի նախընծայ հրատարակութիւնը։ Այս վերջինին դասակից է գնում կարենեանցի Բ օրինակը և Լեյպցիգինը։ Այս ձեռագրերի խումբը անուանումէ Բաումգարտեր «ընդմիջարկեալ դաս», մինչդեռ Վենետիկեան ձեռագրերը՝ «Ը—ընդմիջարկեալ», և բոլոր առաւելութիւնները տալիս է անկարծիք «Ը—ընդմիջարկեալ» խըմբին։ Թէ Շտովիաս Վանանդեցու օրինակը ունի ընդմիջարկութիւններ՝ հաւանականարար նոյն իսկ հրատարակչի գրչից, այդ անկասկած է (օրին. Մարաց թագաւորների ցանկը և լ.

տե՛ս Բառում. եր. 483), բայց թէ այդ կարգի ձեռագրերը (ըստ իմ տրահման Որ խումբ) ընդհանրապէս ընդմիջարկեալ են և բոլորովին խուտելին, այդ մի հարց է, որին իմ հետազոտութիւնները բացասական պատասխան են տալիս (տե՛ս նաև «Ըննասէր» Բ. Նորայրի): Թէ և թիւրիմացութեան տեղիք ըլտալու համար՝ պէտք է ասել որ Վանանդեցու նախընծայ (Editio prince.) ոչ մի գէպքում չէ կարող մի անստգիւտ ներկայացուցիչ համարուել մի որևէ խմբի։ Այդ հրատարակութիւնը (ուրեմն և նրա ձեռագրերը) պատկանումէ մեր Որ խմբին և կրելով հանդերձ հրատարակչի գրչից մտցրած ուղղագրական և այլ մանր ու խոչոր փոխօխութիւններ, ունի նաև աներեւ հետքեր ուրիշ խմբի ձեռագրից սրբազրուած լինելուն։ Այսպիսի սրբազրուած նեան գէպքերը հաղուազիւտ չեն, երբ մի խմբի պատկանող ձեռագրիր սրբազրումէ մի ուրիշ խմբի ձեռագրով։ Այսպիսի պատահարի գեղեցիկ օրինակ կարող է համարուիլ մեր ձեռագրերից թ. 611-ը, որի սրբազրութիւնները՝ նոյն խոկ իւր բուն գրչի ձեռքով՝ գրուած են լուսանցքներում և տողամէջերում։ Ընդհանրապէս՝ այն բոլոր գէպքերում՝ երբ փոքր ի շատէ տատամառութեան տեղիք է երևացել յաւ եմ համարել հիմնուել դիմաւորապէս անձնապէս իմ ձեռքումս եղած ձեռագրերի վրայ, իրեւ աւելի հաստատուն և վերաստուգութեան ընդունակ նիւթի վրայ։

Ձեռագրերի այս 4 խմբից իւրաքանչիւրը, զանազան չափերով, ունին իրենց վատ և լաւ կողմերը, իրենց ուղիղ և աղճատ ընթերցուածները։ Կատ անդամ՝ Ա Բ Գ, խմբերը միանումնեն ընդգէմ Դ-ի, բայց շատ անդամէլ Դիան միանումէ Գիմի հետ, ընդգէմ ԱԲ-ի, Կամ Ա Գ, Գ Բ-ի ընդգէմ Բ-ի, Բ Գ ընդգէմ Ա Դ-ի և լ. և լ.

Խմբերի արժանաւորութիւնների և թերութիւնների, այլ և իրար հետ ունիցած աւելի նուրբ յարաբերութեանց մանրամանութիւնները կորոշուին Խորեն. բնագրի նոր հրատարակութեան մէջ, եթէ այդ կատարելու

Հնարաւորութիւն տրուի ինձ: Այդ հրատարակութեան մէջ ի նկատի կառնուին և մեր բազմաթիւ պատմական—կրօնական պրուածքների (տպեալ և անտիպ) մէջ պահուած Խորենացուց կարծ և երկար անթիւ փոխառութիւնները, հարկաւ այն չափով, որ չափով որ այդ անհրաժեշտ է մի քննադատական ըստ կարելոյն ծիշտ բնագիր ձեռք բերելու համար:

Առ այժմն բաւականանք տալով մեր հետապութիւնների վրայ հիմուած խմբերի արոհման ցուցակը որպէս զի եթէ չյաջողուի մեզ այսափ զբաղեցնող գործը բոլորովին դըլուխ բերել կամ գոնէ շարունակել՝ ուրիշները դիւրութիւն ունենան մեր արածից օգտուելու և եղածը կատարելագործելու:

Ահա մեր խմբերի ցանկը:

Արաբական թուերը մեր մատենագարանի այժման թուահամարներն են ցոյց տալիս: Զեռապրերի մանրամասն նկարագրութիւնը, տրփերի կազմութիւնը, զրութեան թուական ները (տես § 8), զրիչները, տեղը, և լունք ունիս իրենց երկրորդական նշանակութիւնը խմբերի դասաւորութեան դործում՝ թողնում ամբողջ բնագրի հրատարակութեան կցելու համար, եթէ այդ երբ և իցել պուտի գայ: Փակագծուած թուերը ապագրեալ ցուցակի համարներն են:

ա 249

Ա Խոռոր. բ 1661 [1619]

գ Կարինեանցի ա օրինակը (?):

ա 248

բ 1663 [1621]

Բ. Խոռոր. գ 1668 [1626]

գ Անահնի օրինակը (= Վերականգնութիւն)

և Հ. 1 Հայկ. Զեռ. Շեմ. Ար. լեզ. Պրդ.

ա 611

բ 615

գ 1662 [1620]
ի Խոռոր. գ 1664 [1622]
ե 1666 [1624]
գ 1667 [1625]
ա 616
բ 1665 [1623]
գ 1669 [1627]
դ 1671 [1629]
ի Խոռոր. ե 1672 [1630]
զ 1686 [1644]
է Անանդեցու հրատարակ.
ը Կարինեանցի բ օրինակը (= Ամբողջնացու)
թ Լէյպցիկի օրինակը (ըստ Բառուելու և եղածը կատարելագործելու):

Այսուհետեւ մեր հետազօտութեանց մէջ Ա Բ Գ Դ Ի Գլխատառերը ցոյց կտան խմբերը, իսկ փոքր տառերը խմբի այս կամ այն ձեռագիրը (օրինակ՝ Ա. Բ. = թ. 249, Բ. = թ. 1668 և լ.): Խնչպէս արգէն նկատեցնեալք մի քանի անգամ՝ Վեռեակի ձեռագրերի ընթերցուածները որոշ չեն թէ որը ինչ ձեռագրից է, այսափը միայն կարելի է ասել որ նրանք պատկանում են Ա. Բ. Գ Խմբերին: Յայտնի գեղքերում մենք կորոշնեալք թէ ինչ ընթերցուած (վեռեակեան) ինչ խմբի ձեռագրից միայն կարող է լինել: Պ. Եղեանցի և Արզնիի թ. 211 (§ 8) ձեռագրերը տիփի նման կազմութիւն ունին (Խորենացի, Ասողիկ, Լաստիվլերցի, Եւսեբի Եկեղ. Պատմ. և լ.): Տփի կազմութեամբ նման է սրանց և Բ. (= Անահնի) օրինակը (Խորենացի, Ասողիկ, Լաստիվլերտ. և Աշխ. Խորեն.), թէ և ոչ առաջնեների չափ ստուար: Մոյն կազմութիւնն ունի և Ա. Բ. ձեռագրի տուփը որից կարելի է եղբակացնել որ պ. Եղեանցի և Արզնիի ձեռագրերը կարող են պատկանել Ա. Բ. Խմբերին, բայց ոչ Գ. Գրին: Աւելի ճշտելու համար պէտք է գոնէ Ն. բնորոշ ընթերցուած ունենալ, և այն ժամանակ՝ նոյն իսկ առանց ձեռագրերը տեսած լինելու՝ կարելի է որոշել նրա խոռորդը: Այդպիսի բնորոշ

ընթերցուածների նմուշներ կտանք չետղէն-  
տէ մեր գիտողութեանց մէջ, որով խորենա-  
ցու ձեռադիր ունեցողները կարող են որոշել  
իրենց ձեռադիր ինչ խմբի պատկանելը և  
միւս կողմից դրանով մի նոր փորձնական վե-  
րասառուգութեան կենթարկուի իմ առաջարկած  
դաշտունութեանը:

ՄԻԱԲԱՆ.



## ՄԵՇ ԿՐԻՑԻԿՈՍԼ



### III.

յս է Տէնէ աշխարհայեացքը և այս է տի-  
եզերական երեսթների հետազօտութեան մեթովը  
որ նա գործադրումէ իւր ուսումնասիրութեան են-  
թակայ գիտութեանց բոլոր շրջաններում: Դաց մէջ  
գլխաւոր տեղը բունութեն բացի փիլիսոփայութիւ-  
նից հոգերանութիւնը, գեղարուեստական ու գրա-  
կան քննազատութիւնը և պատմութիւնը: Սկսենք  
հոգերանութիւնից որին նուիրուած է լ'Intelligence  
երկչատօր շարագրութիւնը: Հոգերանութիւնը մա-  
նաւանդ կարօւ էր նորոգութեան—դա չին գոր-  
ծի էր, առումէ պրոֆ. Գերիէն.—որ լարել էր գեռ  
ու կը լուսական էլ ձայն չէր հանում: Եթէ հոգերանու-  
թիւնը գիտութիւն է, յայտարարեց Տէն, նորա-  
տուրկան այն պէտք է լինի, որ գտնէ նոր ֆակտեր,  
և եթէ նրան արհամարհում էն այդ նրանից է որ  
նա ոչինչ չի գտնում: Նախկին հոգերանութիւնը  
հիմնուած էր ներքին կամ ինքնազնութեան վրայ.  
Նրան նոր ֆակտեր գտնելու ընդունակ դարձնելու  
համար՝ Տէն հարկաւոր համարեց: «փոխարինել գի-  
տողութեան գործին և կերպարանախուել գիտո-  
ղութեան ենթակայ առարկան»: Առաջին նպատակին  
նա հասաւ նորանով որ «անմիջական գիտողութիւ-  
նը. փոխարինեց այն հոգերանական նշանների վեր-  
լուծութեամբ: որ սովորական է գործածելլ մտա-  
պատկերների յայտնի խմբեր որոշելու համար:  
»Պէտք է մի կողմ թողնել, առումէր նա, այնպի-  
սի խօսքեր: որպիսի են գատողութիւն: բանակա-  
նութիւն, կամք, անձնական կարողութիւն (posses-  
voir personnel) և մինչև իսկ ես բառը՝ այնպէս:  
ինչպէս մի կողմ թողնուեցան բառերս՝ կինսական  
ոյժ, ամրիչ ոյժ (vis medicatrix), բուսական հոգի.  
գորա ոչ այլ ինչ են. եթէ ոչ գրական փոխարերու-  
թիւններ: նոցա ամրող նշանակութիւնը այն բանի

մէջ է կայանում: որ նորա ներկայացնումեն որոշ  
յարմարութիւն իւրեւ այնպիսի ոճեր, որոնք կրծա-  
տումեն և արտայայտումեն համատութքը՝ ընդհա-  
նուր գրութիւնը նշանակելու համար»:

Գիտական խնդիրն այն է, որ հոգերանութեան  
մէջ բոլոր մուլթ անորոշ վերացական բարդ և  
կասկածելի բառերը վերածուին ֆակտերի, ֆակտե-  
րի մասնիկների: ֆակտերի յարաբերութեանց և զու-  
գագրութեանց: «Այդ առաջնին քայլն եղաւ. գորք  
ոչնչացրիք բնազանցական էութիւնները. այժմ սկզ-  
սեցէք երկրորդը՝ բազմացրէք իրական ֆակտերը:  
Դրա համար Տէնը հոգերանութեան մէջ ներմուծեց  
փորձնական (էքսպերիմենտալ) հոգերանութիւննա-  
րա սահմանած անթիւ ֆակտերով և որ մանաւանդ  
բնորոշ է: «փոխեց գիտողութեան ենթակայ առար-  
կան, այսինքն գիմեց այն բնագաւառին, որ առան-  
ձին յաջողութեամբ վերջին ժամանակներս մշա-  
կումեն ֆրանսիացիք, նա գիմեց հոգեկան աշխար-  
հումը յայտնուղ ախտաբանական երեսթների բնա-  
գաւառին: գիտակցութեան երկրաժանութեան և  
հոգեկան հիւանդութիւնից փոփոխուած գաղափար-  
ների և զգացումների զննութեան:

«Նոր գիտութեան գործադրութիւնը մարդկային  
հոգու ուսումնասիրութեան նկատմամբ Տէնի կար-  
ծիքով, պիտի առաջացնէ մեծամեծ արդիւնքներ և  
այդ արդիւնքներին նա սպասումէ խորին ակնածու-  
թեամբ: «Նա մօտենումէ վերջապէս, այս գիտու-  
թիւնը՝ բացականչումէ նա:—և մօտենումէ մար-  
դուն: Նա անցել է տեսանելի և շօշափելի աշխարհի  
սահմանից՝ աստղերից, քարերից, բայսերից: այն  
աշխարհից, որով նորան արհամարհաբար սահմա-  
նակումէին: Նա ձեռն է մխում գէպի մարդու  
հոգին ձիշտ և սուր գործիքներով զինուած: գոր-  
ծիքներ, որոնց ձշութիւնը ապացուցուած և սու-  
գուած է երեքհարիւրամեայ փորձով Արդիւնքը այն  
եղաւ: որին նա սպասումէր. լաւ ընտրուած: կա-  
րեսոր նշանաւոր, իմաստուն կերպով գասաւորուած  
և ամենաշիշգ կերպով նշանակուած մանր ֆակտե-  
րի գիւտը»:

Այդ ֆակտերի բուռն ոյժի առաջ չը գիմացաւ  
կենարնական գաղափարը. մարդկային եսը առաջ  
եկաւ իւրեւ մէջ կատարուող իրողութեանց մի  
շարք: «Il n'y a rien de réel dans le moi, sauf la file  
de ses événements». Այս է այն բանաձեւը, որին հա-  
սաւ գիտական անալիզը: Բայց Տէնը սիրումէ իւր  
գիտական բանաձեւը պատկերներով արտայատել:  
Այն ժամանակ իրողութեանց շարքը գառնումէ  
«լուսափայլ խուրձ՝ սուր լուսափայլ խուրձ»— սուր լուսափայլ խուրձի հետ միասին, որ մենք ենք ներկա-  
յացնում: բարձրութեամբ ուրիշ ուրիշ՝ նման երեսթ-

1) Երեւելի շոտանդացի փիլիսոփայ († 1796),  
որի վարդապետութիւնը յենուում է հոգերանական  
փորձի և առողջ մոքի վերաբար: